# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի N 1264-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ<br>03.04.2024 14:09:56 | Ընդհանուր դիտարկում - Նախագիծը չի արձագանքում այն մտահոգություններին, որոնք առկա են հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ներկայացնող կազմակերպությունների շրջանում անձնական օգնականի ծառայության վերաբերյալ: Ավելին, այն չի նպաստում կառավարության որոշման համապատասխանեցմանը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային, համանուն կոմիտեի ընդհանուր մեկնաբանություններին և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի սկզբունքներին ու 21-րդ հոդվածի պահանջներին: | Դիտարկումն ընդունելի չէ:<br>«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը մշակվել և ընդունվել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին համահունչ:<br>Անձնական օգնականի ծառայության ներդրումը բխում է օրենքից: Նոր ներդրվող ծառայությունները սկսվում են որևէ մակարդակից՝ հետագայում ընդլայնելու և կատարելագործելու հեռանկարը չբացառելով: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ<br>03.04.2024 14:09:56 | Նախագծով առաջարկվում է, որ ամսական առավելագույն ժամաքանակի ընթացքում ծառայությունը չի կարող մատուցվել միաժամանակ 1-ից ավելի անձնական օգնականների կողմից: Միայն մեկ անձնական օգնական ունենալու սահմանափակումը մտահոգություններ է առաջացնում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8.1-րդ հոդվածի առումով, որը պաշտպանում է բոլորի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: Կոնվենցիան արգելում է պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Տվյալ դեպքում չկա որևէ հիմնավորում, թե ինչու է միայն մեկ անձնական օգնական ունենալու սահմանափակումն անհրաժեշտ | Առաջարկն ընդունվել է, նախագծից կետը հանվել է: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ժողովրդավարական հասարակությունում: | | |
| 3 | «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ<br>03.04.2024 14:09:56 | Նախագծով առաջարկվում է հղում անել «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերին: Հարկ է նկատել, որ «Զբաղվածության մասին» օրենքի նշված կետերը վերաբերում են «զբաղվածություն», «աշխատանք փնտրող անձ» և «գործազուրկ» հասկացություններին, որոնք նախագծի այդ հատվածում չեն օգտագործվել և վերաբերելի չեն: Իսկ «աշխատող» հասկացությունը սահմանված է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածով: Միաժամանակ հարկ ենք համարում ընդգծել, որ աշխատելու հանգամանքը որպես պայման դիտարկելը չի բխում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 19-րդ հոդվածի տրամաբանությունից և անտեսում է մարդկային աջակցության կարիք ունեցող և աշխատելու հնարավորություն չունեցող անձանց կենսական կարիքները: | Առաջարկը չի ընդունվել: Առաջարկի մեջ հղման սխալ կա՝ «զբաղվածություն», «աշխատանք փնտրող անձ» և «գործազուրկ» հասկացությունները սահմանված են «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով: Նախագծում հղումը տրված է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերին, որոնցով սահմանված են զբաղվածություն համարվող գործունեության տեսակները: Ինչպես գործող, այնպես էլ նախագծում «աշխատող» հասկացությունը կիրառված չէ: Ինչ վերաբերում է աշխատելու պահանջին, ապա դիտարկումն ընդունվել է ի գիտություն: Շահառուների թիրախ խումբն ընտրվել է՝ հաշվի առնելով պետական բյուջեի հնարավորությունը: Հետագայում այն կարող է վերանայվել: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ<br>03.04.2024 14:09:56 | Նախագծով նախատեսվում է անձնական օգնականների հաշվառման առցանց հարթակին հասանելիություն տալ նաև «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձնական տվյալներ մշակելն օրինական է, եթե տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, բացառությամբ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի: Հարկ է նկատել, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը ուղղակիորեն չի նախատեսում նման դեպք և պարտադիր վերապատրաստման գործառույթը սահմանված չէ օրենքով: Այս լույսի ներքո անհրաժեշտ է առաջարկվող կարգավորումը համապատասխանեցնել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին, այդ թվում՝ 9-րդ հոդվածի պահանջներին: | Առաջարկը չի ընդունվել: Անձնական օգնականի թեկնածուն առցանց հարթակում կամովի է լրացնում հայտադիմումը, բացի այդ, ներկայումս լրամշակվում է առցանց հարթակի նկարագիրը, որի համաձայն թեկնածուն տալիս է իր համաձայնությունն առ այն, որ իր անձնական տվյալները մշակվեն բացառապես անձնական օգնականի ծառայության շրջանակում: | |